



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՓՆԻՌ 1.0 Ի Ի

ՊԻԼԴԻՍԻ ԵՐԳԵՐԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԹԱՐԳ. ՀԱՅԿ ԳԱՐԱԳԱԾ

1928

ՏՊԱՐԱՆ «ՓԱՐՈՍ»

ԹԻՒՐԱՆ

88

Պ-56

20 JUN 2006

25 NOV 2010

№ 6 «ՂԱՂԱՓՈՐՈՒԻ ԳՐԱԴԱՐԱՆ» № 6

Փ Ի Է Ռ Լ Ո Տ Ի

ՊԻԼԴԻՄԻ ԵՐԳԵՐԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ


ԹԱՐԳ. ՀԱՅԿ ԳԱՐԱԳԱԾ



1928

ՃԳԱՐԱՆ «ՓԱՐՈՍ»
ԹԻՎԱՆ

88
Պ-55
ար.



308-15 | 15 | 38


1003
22033

6263

22.07.2015

8979

ՊԻԼԴԻՍԻՆ ԵՐԳԵՐԸ



ՓԻԷՌ ԼՈՒԻ—Ի

Հին դարերու սիրոյ այս փորձիկ զերբը յարդանօք նսրում է սպազայ ընկե-
ութեան երիտասարդ ազնիկներուն:

Փ. Լ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Օգտակար և հաճելի գեղարւեստական ծանօթութիւն մը պիտի
ըլար հայ ընթերցողներու համար Փիէռ Լուիի յունարէնէ

Թարգմանած «Պիլիդիսին երգերը», որը կը բաղկանայ երեք մասերէ.—

1. Հովերգութիւնը Փամֆիլիայում. *)
2. Եզերերգութիւնը Միթիլէնում.
3. Պարսաւերգութիւնը (էիիկոամ) Կիպրոսում.

Այս երեք մասերուն ոչ ամբողջութիւնը՝ այլ ընտրովի թարգ-
մանած եմ, և աւելի ըմբռնելի գարձնելու ու Պիլիթիսի Կեանքի մասին
դպրոցի մը տալու համար ընթերցողին, անօգուտ չեմ հեկատեր թարգ-
մանարար մէջ բերել նաև Փիէռ Լուիի գրքին երկար նախաբանէն
հետեւալ անհրաժեշտ տեղեկութիւնները:

«Պիլիդիս ծնւեցաւ 6 դար քրիստոնէական թւականէն
առաջ, Փամֆիլիի արևելքում, Մէլաս-ի **» ասիերին գանւոյ
լեանոտ գիւղի մը մէջ: Այս երկիրը ախուր և լուրջ տեսք ունի,
մթազնած է խոր անտառներով, և Տաւրոսի հսկայական զանգ-
ւածը կ'իշխէ ամենուրէք: Հիասքանչ աղբիւրներ դուրս կը սա-
հին ժայռերէն: Մեծ աղի լիճեր կը գանւին բարձունքներուն
մէջ և ձորերը լինն լուսթեամբ:»

«Նէ յոյնի մը և փիւնիկեցի կնոջ մը ազնիկն էր:
Կերեայ թէ նէ չէ ճանչցեր հօրը, սրովհետև ոչինչ չի յիշեր

*) Փոքր Ասիոյ հարաւին մէջ գանւոյ երկիր մը, Միջերկրական ծովուն վրայ:

***) Փամֆիլիայի գետ մը որը սկիզբ կ'առնէ Տաւրոսի սա-
րերէն և կընկաւ Միջերկրական ծովը Սիդաի քով: Այժմ Մէնուկա ա-
նունը կը կրէ:

անոր մասին իր զբաղմունքներուն մէջ: Դեռևս ան մեակեր է նախ քան իր ծնունդը: Այլապէս դժուար է հասկնալ թէ որտեղէն կ'ուզայ անոր փրկելիական այս անունը, որը միայն մայրը կրնար տալ անոր: Գրեթէ անապատային այդ երկրէն մէջ նէ կապրէր խաղաղ կեանքով մը մօրը և քոյրերուն հետ: Ուրիշ երիտասարդ աղջիկներ որ իր բարեկամութիւններն էին եղած, կ'ապրէին ոչ հետու անկէ: Տաւրոսի անտառոտ գոտի վայրերուն վրայ հովիւները կ'արածեցնէին իրենց հօտերը: Նէ, առտուն աքլորի կանչին հետ կը դարձնէր, կերթար դո՛ւ, անառնները կը ամենէր շուր խմցնելու և կը դբազէ: անոնց կաթը կթելով: Յերեկը, երբ կ'անձրեկէր, կը մտար կանանոցը և բուրդի ճախարակը կը մանէր: Եթէ եղանակը լաւ ըլլար, նէ կը վազվզէր դաշտերը իր ընկերութիւններուն հետ. և հազարուոր խաղեր կը խաղար, որոնց մասին մեզի կը խօսի իր զբաղմունքներուն մէջ:»

«Պիլիզիս շատ կը սիրէր ազբւրներուն յուերժամարները և յաճախ մեզ կը խօսի անոնցմէ»

«Իր հովուէնու կեանքին վերջը արարութեամբ լեցուցաւ սիրոյ մը պատճառաւ, որի մասին քիչ բան գիտենք, հակառակ որ ինքը երկարօրէն կը խօսի: Նէ գաղարեց այդ առթիւ երգելէ երբ որ դժբաղատացաւ: Պիլիզիս երեխայ մը ունեցաւ, լքեց անոր և խորհրդաւոր պատճառներու հիման վրայ թողեց Փամֆիլին ու այլևս երբէք չը վերադարձաւ իր ծննդեան վայրը:»

«Ետքը մենք անոր կը հանդիպինք Միթիլէնի *) մէջ ուր կ'ներ էր ծովու ճամբայով, անցնելով ամրական դեղեցիկ ափերը: Հազիւ 16 տարու էր ըստ պ. Հէյմի երգրահացութիւններուն, զոր որոշ թւեր կ'ուտայ Պիլիզիսի կեանքին վերաբերեալ:»

Այստեղ երկարօրէն փիլէս Լուի կը նկարագրէ Միթիլէնը, ծովը, երկիրքը, սովորութիւնները, զգեստները, փողոցները, զիշերային դուարձութիւնները, պարերը, երգերը, նազաձութիւնները, Փիթթաքօսի **) օրէնքները այս զեղխութեանց վերաբերեալ և այլն:

*) Նախկին Լեսպոսն է, ևսողական գաղութ մը: Այժմ տաճկական կղզի մէջ էգէտան ծովուն վրայ:

**) Յունաստանի եօթը իմաստուններէն մէկը: Ծնած Միթիլէնում 650 տարի նախ քան Քրիստոս: Ազատեց իր հայրենիքը բռնակալներէ և իշխեց ամբողջ 10 տարի, հաստատեց օգտակար օրէնքներ, և փէքը կամովին հրաժարեցաւ իշխանութենէ:

«Ընկերութեան մը մէջ ուր ամուսինները զիշերը այդքան զբաղած էին գինիով ու պարուհիներով, կանայք ճակատազրակահորէն պլտի փնտուէին իբարու մետէնալ և իբարու մէջ գանալ իրենց մենութեան միթիթարութիւնը: Այստեղէն առաջացաւ, որ անոնք տարեցան այն նուրը սէրերով, որոնց հին դարը իր անունը տաւ, և որոնք կը ծնեցնեն, կնչ որ ալ մտածեն տղամարդիկ, աւելի ճշմարիտ հրայրք, քան ախտաւոր արեւստականութիւն:»

«Այս առն Սաֆօն *) գեռ գեղեցիկ էր: Պիլիզիս ճանդզցաւանոր և մեզ կը խօսի անկէ փղաբֆա անւան տակ, որ նէ կը կրէր Լեսպոսում: ** Մնշուշա այս կիւնն էր, որ սովբեցուց փոքրիկ փամֆիլուհուն, չափաւոր սողերով երգելու իր սիրելի անձանց վերաբերող յիշուութիւնները ու թողնելու յաջորդ սերունդին:»

«Նէ մեզի թողած է շուրջ եռեսուն կտոր եղերերդութիւններ, իր բարեկամութեան պատմութիւնը իր տարիքի աղջկայ մը հետ, որուն անունը Մնազիտիքա էր, և որը կ'ապրէր անոր հետ:»

«Երբ Պիլիզիս զրաց որ այլևս ոչինչ իրեն չէր պահեր Միթիլէնի մէջ, եթէ ոչ վշտալի յիշողութիւններ, երկրորդ ճամբորդութիւն մը ըրաւ: Նէ, զնաց կիպրոս, Յունական և Փիլիկեան կղզի մը ինչպէս Փամֆիլին, որը և յաճախ կը յիշեցնէր անոր իր հայրենի երկրին տեսքը:»

«Պիլիզիս, երրորդ անգամ այնտեղ վերսկսեց իր կեանքը, այնպէս որ այլևս բնաւ դժուար չ'ըլլար բացատրել, առանց այդ բոլորը թւելու, թէ սէրը մինչև որ աստիճան սուրը էր համարւած հին ժողովուրդներու քով:»

*) Յայն բանաստեղծուհի, ծնած է Լեսպոս, ազնականի աղջիկ: Գրած է 9 հատոր բանաստեղծութիւններ: Ծառ կեղինակներ, անոր ներկայացուցած են իբր պերճաղիճ և Լէզգիտան սիրոյ քարոզիչ:

**) Միթիլէնի երկրորդ անունն է:

«Ամաթօնթի պերճազիճերը մերիններու պէս լնկած աւարածներ չէին, ոչ ալ արաքուած աշխարհային բոլոր ընկերութիւններէն, անոնք քաղաքի լաւագոյն ընտանիքներու աղջիկներն էին: Գեղեցիութեան ասուածուհի Աֆրօտիթան *) անոնց գեղեցիութեան ձօնն էր ըրեր, և անոնք շնորհակալութիւն կը յայտնէին ասուածուհուն, անոր պաշտամունքի ծառայութեան համար նւիրագործելով իրենց երախտազէտ գեղեցիութիւնը: Բոլոր քաղաքները որոնք կիպրոսի պէս պերճազիճներով հարուստ տաճար մը ունէին, նոյն յարգալից խնամքը կը տածէին հանդէպ այս կանանց:»

Փիէո Լուի այստեղ կ'ուսայ Ֆոնինէի **) պատմութիւնը երկարօրէն և կ'աւելացնէ թէ իրեն համար Պիլիզիս ալ նոյնն է, բայց կ'աւստի որ անաջինէն շատ են խօսէր հին հեղինակները, իսկ վերջինէն՝ քիչ:

«Պիլիզիս պերճազիճ մ'է կըսած ասիկա անհերքելի է, և նոյնիսկ իր վերջին երգերը կ'արտայայտեն թէ անոր առաքինութիւնները և թէ թերութիւնները: Սակայն ևս կ'ուզեմ գիտնալ միայն անոր առաքինութիւնները: Նէ բարեպաշտ էր և հաւատացեալ: Նէ հաւատարիմ մնաց տաճարին որչափ որ Աֆրօտիթան երկարաձգեց երիտասարդութիւնը իր ամենամաքուր ամբիածուհու մէջ: Այն օրը, որ նէ գաղտնեցաւ սիրելէ դադրեցաւ և զրելէ: Սակայն զժլար է ընչունել որ Փամֆիլիի երգերը գրւած ըլլան այն ժամանակ երբ ապրւեր են: Ինչպէս սարերի պատիկ հովուհի մը պիտի սովորած ըլլար և ողական աւանդութեանց զժլարին յանդերով չափաւրել իր բանաստեղծութիւնները:»

*) Աստղիկ:

**) Աթէնքի յոյն յայտնի պերճազիճներէն մէկը, քանդակագործ Փուաքսիթէլի սիրուհին: Անչափ հարուստ, խիստ ճարպիկ և շատ գեղեցիկ կին մը: Երբ Ազէքսանդրը աւերեց Թերը, Ֆոնինէն առաջարկեց վերանորոգել իր հաշիւն, պայմանաւ որ քաղաքին զլիաւոր զբան վրայ գրէր «Ազէքսանդրը աւերեց քաղաքը, իսկ Ֆոնինէն վերանորոգեց:» Թերացիք մերժեցին:

«Աւելի հաւանական է գետնս որ, Պիլիզիս, ծերացած հասակին մէջ ցանկացաւ երգել իրեն համար հեռաւոր մանկութեան յիշողութիւնները: Իր կեանքի այս վերջին շրջանին վրայ բան մը չ'ենք զիտեր, և ոչ իսկ թէ ինչ տարիքի մէջ մեռաւ:»

«Պիլիզիսին զերեզմանը գտել է պ. Հէյմ, Փալաէօ Լիմիսօուսմ, հին ճանապարհի մը եզերքին ոչ հեռու Ամաթօնթի աւերակներէն:»

«Այս աւերակները, գրեթէ աներևոյթացեր են, 30 տարիներէ ՚ի վեր և այն տունին քարերը, ուր, գուցէ, ապրեցաւ Պիլիզիս, կը սայայտակեն այսօր Փօթ Սախի քարափը: Բայց զերեզմանը ստորերկրեայ էր, ըստ փիւնիկեան սովորութեան, և այսպիսով խուսափեր էր թանգարժէք զանձերու գողերէն:»

«Պ. Հէյմ այնտեղ մտաւ նեղ ջրհորէ մը, որը լցւած էր հողով, և խորքին մէջ հանդիպեցաւ պատով զոցւած դռան մը ու պարտաւորեցաւ քանգել, և գտաւ լայնատարած ու ցած նկուզ մը, սալայտակաւ կը քարտու, շորս պատերը ծածկուած էին սև երկղիմաքարի մեծ տախտակներով, որոնց վրայ քանդակւած էին նախնական զլիաաւարով բոլոր այն երգերը, որ պիտի կարգաք, բացի երեք տապանագրերը որոնք կը զարկէին քարագագաղը:»

«Այնտեղ կը հանգչէր Մնազիտիքայի բարեկամուհին, եփած հողէ մեծ դազաղի մը մէջ, որուն ծածկոցին վրայ հմուտ ու նուրբ արձանագործը, կաւով կազապարեր էր հանգուցեալի դէմքը:»

«Մագերը սև էին ներկած, աչքերը կիսափակ և մատիտով երկարաձգւած, կարծէք թէ կենդանի ըլլային, և այսին վրայ հազիւ նկատելի թեթև ժպիտ մը կար, որը սկիզբ կ'առնէր բերնի զծերէն:»

«Ոչինչ չ'էր կրնար որ և է ձեով արտայայտել թէ ինչ կը ներկայացնէին շրթերը, որոնք միաժամանակ անարտա և եզերւած, մեղկ էին և նուրբ, միացած մէկ մէկու, և կարծէք հարբեցած իրենց միացումէն:»

«Երբ զերեզմանը բացին, նէ ճիշտ այն վիճակին էր, ինչ վիճակի մէջ որ բարեպաշտ ձեռք մը տեղաւորեր էր անոր 24 դար առաջ: Բուրումներու աղակէ շիշեր կախւած էին

հողէ երիթներէ և անոնցմէ մէկը այսքան երկար տաննէ վերջ դեռևս բուրումնալից էր: Արծաթէ հայելին, որուն մէջ Պիլիդիոս նայեր էր իրեն, սրաքը որ կապոյտ սնդոյրն էր քաշեր անոր կողերուն, իրենց սեղը դանւեցան: Պղտիկ, մերկ Ասթարթէ *) մը — նշխարք առ յաւէտ թանգարժէք — կը հսկէր ընդմիշտ, ձիւնի ձիւղի մը նմանող, իր բոլոր սակէ և ձերմակ գոհարներով զարդարւած կմախքին վրայ, բայց այնքան նրբին և բեկուն էր ան, որ երբ դիպան անոր, փոշիացած թափեցաւ գետին:»

1. Թ Ա Ռ Բ

Ծառի մը վրայ բարձրանալու համար հանւեցայ: Մերկ զիստեքս կը դիպէին խոնաւ ու ողորկ կեղեր: Սոնտաշներս կը քայլէին ձիւղերուն վրայ:

Ամենէն վերը, բայց դեռևս տերկներուն տակ և շաքէն պատասպարւած, անշատ երկձիւղի մը վրայ նստեցայ ինչպէս ձիւղ մը և ոտքերս պարապին մէջ շարժեցի:

Անձրեք էր: Զուրի կաթիլները կիյնային և կը հոսէին մորթիս վրայէն: Զեռքերս արտատաւորւած էին մամուռով, և ոտքիս բթամտաբեր կարմիր էին, կախստած ծաղիկներուն պատճառաւ:

Գեղեցիկ ծառին ասլրուժը կրկնայի երբ քամին կ'անցներ անոր մէջէն, և որուն ջնիւրս կը սեղմէի ևս առաւել, ու բայ շուրթերս կը փակցնէի ձիւղի մը մազոտ ծոծրակին:

2. ՄԱՅՐԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ

Մայրս ինձ կը լողցնէ մութին մէջ, նէ կը հազցնէ զիս պայծառ արեին տակ, և կը սանտրէ լոյսին մէջ, բայց

*) Աստուածուհի, պաշտւած բոլոր սեմական ժողովուրդներէն: Նէ միաժամանակ կը ժարմնացնէր իր մէջ և Կուսութիւնը և Մայրութիւնը: Այս իսկ պատճառաւ անոր պաշտամունքի մէջ մենք կը հանդիպինք ծիսակատարութիւններու որոնք հեշտութեամբ կը փոխին գեղի տեսարաններու և կը համարին արիւնարբու և սնդութ չափազանցութիւններու:

եթէ ես դուրս ելլամ լուսնոյ լոյսին տակ, նէ կը սեղմէ դօտիս և կրկնակի հանգոյց մը կ'ընէ:

Նէ ինձ կըսէ. իսղանկոյսերուն հետ, պարէ պղտիկ երկխաներուն հետ, մի նայիր պատուհանէն, փախիր երիտասարդներու խօսքերէն և վախեցիր այրիներու խորհուրդէն:

«Երեկոյ մը, աղամարդ մը, ինչպէս բոլոր աղջիկներուն, կուգայ քեզ տանելու շէմքին վրայէն, իրթուն նւազարաններու և սիրերզող սրինգներու մեծ շքախմբով:»

«Այդ իրիկունը, երբ տուն երթաս, Պիլիդո, դու ինձի համար կը թողնես երեք լեզիով լեցուն կօշեր, մէկը առաւան համար, մէկը կէս օրւան համար և երրորդ մը՝ ամենէն դառնը, և երրորդ մը տօներու օրերուն համար:»

3. ԱՆՅՈՐԳԻ

Երեկոյեան երբ նստած էի տան դռան առջև երիտասարդ մը եկաւ անցնելու: Նայեց ինձի, ես երեսոս դարձուցի, խօսեցաւ ինձի. ես չը պատասխանեցի:

Յանկացաւ ինձի մօտենալ. ես պտտին կրթնած մանգաղներէն հաս մը վերցուցի և անոր գէմքը երկուսի կը բաժնէի եթէ քայլ մը աւելի ստաշանար:

Ան քիչ մը ետ-ետ գնաց, ժպտեցաւ, ձեռքը շրթերուն ինձ նայելով մրմնջեց «Մսացիր համբոյրը:» Ու ես ճչացի, ու ես արտասուցի: Այնչափ որ մայրս վրայ եկաւ:

Անհանգիտս, կը կարծէր որ կարիճ մ'էր խայթեր զիս: Ես կ'արտասուէի ըսելով. «Ան ինձ համբուրեց:» Մայրս ալ համբուրեց զիս ու թեկերուն մէջ զրկած տարու:

4. ԱՆՀԱՄԵՐՈՒԹԻՒՆ

Ես նեւաւեցայ անոր թեկերուն մէջ արտասուազին և երկար տան ան զգաց որ տաք արցունքներս հոսեցան իր ուսին վրայ, նախքան որ վիշտս թոյլատրէր զիս խօսել:

«Աւանդ, ես դեռևս աղջնակ մ'եմ, երիտասարդները ինձի չ'են նայիր: Արդեօք էրբ ես ալ քեզի պէս երիտասարդ աղջիկի կուրծքեր կուսենամ, որ զգեստս ուսճեցնեն և համ-

բոյրի փորձութիւնը ստեղծեն:»

«Եթէ զգեստս վայր սահի, ոչ ոք չի նայիր հետաքրքրուած աչքերով: Ոչ ոք չի վերցնէր ծաղիկը, որ իմ մագերէս կ'իյնայ: Ոչ ոք չի ըսեր որ կ'սպաննէ զիս եթէ շուրթերս ուրիշ մը համբուրէ:»

Նէ ինձ պատասխանեց գորովագին. «Պիլիզիս, պզտիկ կոյս, դուն կ'աղմուկես ինչպէս կտտուն լուսնի հանդէպ, և կը յուզուիս գուր տեղը: Ամենէն անհամբեր ազջիկները ամենէն շուտ ընտրուողները չ'են:»

5. ԱՆՏԱՌԻՆ ԳԵՏՐ

Ես մենակ լողցայ անտառի գետին մէջ: Անկասկած ես վախ կ'ազգէի յաւերժահարսերուն, որովհետեւ հազիւ ես կը գուշակէի անոնց տեղը և այն ալ շատ հեռուէն, անթափանց շուրթին տակ:

Ես անոնց կանչեցի: Ամբողջովին անոնց նմանելու համար, ես ծոծրակիս ետեւը հիւսեցի սև խոխոններ ինչպէս մագերս, դեղին շահարակներու սղկոյգներով:

Երկար վէտվէտուն խոտով մը, ես ինձի համար կանանչ գօտի մը պատրաստեցի, և զայն տեսներու համար ես սեղմեցի ստինքներս, գլուխս քիչ մը խոնարհելով:

Եւ ես կանչեցի. — «Յաւերժահարսեր. Յաւերժահարսեր, խաղացէ՛ք ինձի հետ, բարի եղի՛ք» բայց յաւերժահարսերը թափանցիկ են, և գուցէ, առանց այդ գիտնալու, ես զգուցի անոնց թեթև թևերը:

6. ՊԱՐԵՐԸ ԼՈՒՄՆԻ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Կակուղ խոտին վրայ, զիշերւան մէջ, մանուշակի մագերով երիտասարդ ազջիկները, ամենքը միասին կը պարէին, և երկուսէն մէկը սիրականին պատասխանները կ'ուտար:

Կոյսերը կ'ըսէին. — «Մենք ձեզի համար չ'ենք»: Եւ կտրծես ամօթահար եղած կը ծածկէին իրենց կուսութիւնը, Այժմ-մարդ *) մը սրինգ կը նւագէր ծառերուն տակ:

*) Սաղիր, զաշտային կիսասուած որուն պատկերացումը հետեւեալն էր. — երկար սրածայր ա'լանջներ, ճաղատ գլխուն վրայ երկու փոքրիկ կտտոջներ, կարճ ու տափակ քիթ մը, այծի ոտքեր, փոքրիկ պոչ մը և ամբողջ մարմինը ծածկուած մազով: Այժմ այս բանը կը գործածեն արտայայտելու համար անամօթ, ցինիկ, լիախ մարդ մը:

Միւսները կ'ըսէին. — «Իմ կ'ուզաք մեր ետեւէն»: Անոնք սեղմեր էին իրենց շրջագրեսաններն արացի զգեստներու պէս և անկորով կը պայքարէին խառնելով իրենց պարօղ սըրունքները:

Յոքը ամեն մէկը իրեն ընդունելով պարուած բոնեց իր բարեկամուհիին ականջներէն, ինչպէս երկկանթանի աման մը և գլուխը հակած վայելեց համբոյրը:

7. ԱՄՈՒՍՆԱՅԱԾ ԲԱՐԵԿԱՄՈՒՅԻՆ

Մեր մայրերը միաժամանակ յղի էին և այսօր երկկանթան նէ ամուսնացաւ, Մէլիսան, իմ ամենասիրելի բարեկամուհիս: Վարդերը դեռևս ճամբուն վրայ են, շահերը դեռ կը վառին:

Եւ ես կը դառնամ նոյն ճամբայով մայրիկիս հետ և կը խորհիմ: Այսպէս ինչ որ նէ եղաւ այսօր, ես ևս պիտի կարենայի ըլլալ: Գլխիկ ես ալ այդքան մեծ ազջիկ եմ:

Շքախումբը, սրինգները, հարսանեկան երգը և փիսայի ծաղկազարդ կառքը, բոլոր այս տօները, ուրիշ զիշեր մը պիտի թաւալին իմ շուրջը ձիթենիի ճիւղերուն մէջ:

Ինչպէս այս իսկ ժամուն Մելիսան, այնպէս ալ ես պիտի քաղամերկւիմ մարդու մը առաջ, պիտի ճանչնամ սէրը զիշերուն մէջ, քի աւելի ուշ պզտիկ երեխաներ պիտի կերակուրին իմ ուռճացած ստինքներէն:

8. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յաջորդ օրը գնացի անոր քով և մենք շիկնեցանք իրար տեսներնուս պէս: Նէ ի՞նչ տարաւ իր սենեակը, որպէսզի մենք բոլորովին մենակ ըլլայինք:

Ես շատ բաներ ունէի անոր ըսելու, բայց անոր տեսնալով ես մոռցայ: Չը համարձակեցայ նոյնիսկ նետուի անոր պարանոցը, կը նայէի անոր վրայ կապուած գօտիին:

Կը զարմանայի որ ս'ընչ չ'էր փոխուած անոր դէմքին վրայ, որ դեռևս իմ բարեկամուհիս կը թւար, և սակայն երեկ զիշերունէ ի վեր, նէ սովորեւ էր այն բոլոր բաները որոնք զիս կը խրաչեցնէին:

Յանկարծ ես նստեցայ անոր ծունկերուն, ես զրկեցի անոր իմ թևերուն մէջ, ես ուժգնակի ու անձկագին խօսեցայ անոր սկանջին: Եւ նէ զբաւ այսը այսիս ու ըսաւ ամեն ինչ:

9. ԼՈՒՍԻՆԸ ԿԱՊՈՅՑ ԱԶՔԵՐՈՎ

Գիշերը, կնիկներուն մագերը և սուրներուն ճիւղերը կը խառնւին իրարու: Ես կը քայլէի շուրին եզերքէն: Յանկարծ լսեցի երգի ձայն. այն ասան միայն զիացայ, որ այնտեղ երիտասարդ աղջիկներ կային:

Ես անոնց ըսի. «Ի՞նչ կ'երգէք դուք»: Անոնք պատասխանեցին. «Անոնց որ կը վերադառնան»: Մէկը կ'սպասէր հօրը և միւսը եղբօրը, բայց ան որ կ'սպասէր խօսեցիւրին ամենեն անհամբերն էր:

Անոնք իրենց համար պտակներ և ծաղկեղզեստներ էին հիւսեր, արմաւենու ոտներ կարեր և դուրս էին քաշեր շուրի լոտոսներ: Իրար վզով շղթայած կ'երգէին իրարու ետեւէ:

Ես կ'երթայի գետին երկայնքով, տխուր և մէն մենակ, բայց շուրջս հայելով, տեսայ որ մեծ ծառերուն կտակէն կապոյտ աչքերով լուսինը ինձ կ'առաջնորդէր:

10. ԵՐԳ

Ո՛վ անտառային սուեր ուր պիտի գար նէ, ըսէ ինձի, ո՛ւր գնաց իմ սիրուհին. — Նէ իջաւ դաշար: —

— Դաշտ, ո՛ւր գնաց իմ սիրուհին: —

— Նէ կ'երթար գետի եզերքով:

— Գեղեցիկ գետ դուն որ տեսար անոր անցնելիս, ըսէ ինձի, անիկա այս մօտերն է: — Նէ զիս թողեց ու գնաց նրբուկիով: — Նրբուկի, կը ակնհաս զինքը գեռուս: — Նէ թողեց զիս ու բռնեց մեծ ճամբան:

— Ո՛վ ձերմակ ճամբայ, քաղաքի ճամբայ, ըսէ ինձի ո՛ւր առաջնորդեցիր անոր: — Սարգի *) ոսկէ փողոցը: — Ո՛վ լուսոյ փողոց, կը դաշխս արգիօք անոր մերկ սաքերուն: — Նէ մտաւ թագաւորին պալատը:

— Ո՛վ պալատ, ո՛վ շքեղութիւնն երկրի վերագարձուր ինձ անոր: — Նայէ, նէ քառամտնեակներ ունի ստինքներուն շուրջը և փետրափնջեր մագերուն մէջ, հարիւր մարգարիտներ սրունքներուն երկայնքին և երկու թևեր մէջքին շուրջը:

*) Նախկին փոքր Ասիոյ, Լիւբայի թագաւորութեան մայրաքաղաքը: Անցեալի մէջ յայտնի էր վաճառականութեամբ և հարստութեամբ: Աւերեց Թէյմուր Լանգի ձեռքով, դեռևս ավերակները գոյութիւն ունեն:

11. ՄԻՐԱԼԻՐ ԲԱՐԵԿԱՄՈՒՀԻՆ

Փոթորիկը տեսց ամբողջ գիշերը: Գեղավարս Սէլէնիսը եկեր էր ինձ հետ մէկտեղ մանելու: Փողոցային ցեխերէն վախնալով նէ մնաց քովս և մենք սեղմած մէկ մէկու պառկեցանք պղտիկ անկողնիս մէջ:

Երբ աղջիկները երկուսով կը պառկին, քունը կը մնայ դուռն առջև: «Պիլիգիս, ըսէ ինձի, ըսէ ինձի որ կը սիրես զիս»: Նէ կը սահեցնէր սրունքը սրունքիս վրայ մեղմօրէն փաղաքշելով:

Եւ նէ ըսաւ բերնիս առջև. «Գիտեմ Պիլիգիս, որ դուն կը սիրես: Փակէ աչքերդ, ես Լիբանս եմ»: Պատասխանեցի անոր զիպշելով. «Չեմ տեսնար միթէ, որ աղջիկ ես, կատակդ անյաջող է»:

Բայց նէ պատասխանեց. — Ճշմարիտ որ ես Լիբանս եմ, եթէ փակես կոպերդ: Տես անոր թևերը, անա անոր ձեռքերը...»: Եւ դարձապիս, լուսթեան մէջ նէ զիւթեց երազանքս եղակի պատրանքով մը:

12. Ո՛ՒՍԱՐԱԿԸ

Ամբողջ օրը մայրս փակեց զիս կանանոցին մէջ, քոյրերուս հետ, որոնց չ'եմ սիրեր և որոնք կը խօսին իրարու մէջ ցածրաձայն: Ես քաշուած պղտիկ անկիւն մը կը մանեմ ճախարակս:

Ճախարակ, քանի որ ես քեզի հետ մենակ եմ, քեզի պիտի խօսիմ: Քու ձերմակ բուրգի կեղծամով, պառաւ կընկայ մը կը նմանիս: Լսէ ինձի:

Եթէ ես կարենայի, ես այստեղ չէի մնար նստած պատի սուերին տակ և չէի մաներ ձանձրոյթով: Ես կ'երթայի պառկելու Տաւրոսի գառիվայրներու մանուշակներուն մէջ:

Քանի որ ան աւճի աղքատ է ըսն ես, մայրս չի ուզեր ան ինձի հետ ամուսնանայ: Սակայն ես քեզի կ'ըսեմ, կամ ես հարսանեկան օրը չ'եմ տեսնար և կամ թէ միայն անիկա ինձի կ'անցնէ անոր շէմքէն:

13. ՄՐԻՆԳԸ

Յակինթատօնի օրը ան ինձի եզգէ աղուր տաշած սրինդ մը տուաւ, փակցուցած ձերմակ մեղրամովով, որը կ'անուշահամէ շուրթերս ինչպէս մեղր:

Ան ինձի ծունկերուն վրայ նստեցուցած կը սովրեցնէ:

նազել, բայց ես քիչ մը կը գողամ: Ինքը ինձմէ կաքը կը նւագէ: Այնչափ մեղմօրէն որ ես հազիւ կը լսեմ:

Ոչինչ չ'ունինք իրարու ըսելու, այնչափ որ իրարու մօտիկ ենք, բայց մեր երգերը կ'ուզեն միմիանց պատասխանել, և հերթով մեր բերանները կը միանան սրինգին վրայ:

Ուշ է, անա կանանչ գորտերու երգը, որոնք կ'սկսեն գիշերուան հետ: Մայրիկս երբէք չըզլտի հաւատայ, որ ես այսչափ երկար ուշացեր եմ կորսնցուցած դօտիս փնտուելու համար:

14. ՎԱՐՍԵՐԸ

Մն ինձի ըսաւ՝ «Այս գիշեր ես երազեր եմ: Քու վտրտերդ պարանոցիս շուրջն էր: Քու մագերզ սե վզնոցի մը պէս փաթաթուեր էին ծոծրակիս ու կուրծքիս շուրջը:

Ես կը փաղաքէի անոնց, և անոնք իմն էին, և այսպէս մենք ընդմիշտ կապուած էինք իրարու նոյն մագերզով, շրթունք շրթունքի, ինչպէս երկու զաւիններ, որոնք յաճախ մէկ միակ արմատ ունին:»

«Նւ քիչ առ քիչ ինձի թւեցաւ — այնչափ մեր անդամները խառնուած էին իրարու — որ ես կը գտնայի դու, և դուն կը մանայիր ինձի մէջ, ինչպէս իմ երազը:»

Երբ ան վերջացոյց, ան մեղմօրէն դրաւ իր ձեռքերը իմ ուսերուս վրայ ու նայեցաւ ինձի, այնչափ անուշ հայացքով մը որ ես սարսաղին խոնարհեցի աչքերս:

15. ԲՈՒԺՂԿԻ

Կիքասը տեսաւ որ ես եկայ հագնուած միայն ծառերու ճիւղերէն հիւսուած կարճ զգեստով մը, որովհետեւ օրերը հեղձուցիչ են: Մն ուզեց կազապարել իմ սախնքը, որ բաց էր մնացեր:

Մն վերցուց նուրբ կաւը, խմորեց սառն ջուրի մէջ: Եւ երբ անով սեղմեց մօրթիս վրայ, ես կարծեցի թէ ուշագնաց կ'ըլլայի, այնչափ այդ հողը պող էր:

Ի՞նչ կազապարուած կուրծքէն, ան կըսէր և պարտաւոր բաժակ մը շինեց: Դրեց արեւը, որ չօրնայ և ներկեց, ծիրանեզոյն ու դեղին ծաղիկներ սեղմելով չորս դին:

Ետքը մենք գնացինք մինչև աղբիւրը, որը ձօնուած էր յաւերժանարտերուն ու մենք նետեցինք բաժակը ջուրի հոսանքին մէջ, շահարակի ցողուններով:

16. ՎՐԻՆԵՐԻ ԳԻՇԵՐՎՆ ՄԻՋ

Գիշերը իշնալուն պէս աշխարհը մերն է և ասուածնեւունը: Մենք կ'երթանք դաշտերէն աղբիւր, մութ անտառներէն բացասները, ուր մեզ կը տանին մեր մերկ ստքերը:

Պզտիկ աստղերը բաւական կը փայլին մեզի պէս պղտարիկ սոււերներու համար: Երբեմն ցած ճիւղերուն տակ մենք կը գտնանք նիրհած եղնիկներ:

Բայց, գիշերուան մէջ, ամենէն զրաւիչը քան որեւէ ուրիշ բան մը, մեզի ծանօթ տեղ մըն է, որը մեզ կը զրաւէ անտառին մէջէն, խորհրդաւոր վարդերու մացառ մը:

Որովհետեւ ոչինչ այնքան ասուածային է երկրի վրայ որչափ վարդերուն բուրումը գիշերուան մէջ: Ինչհաւ այն տանը երբ մենակ էի, այսպէս հարբած չ'էի զգար զիս անոնցմով:

17. ԽՂՈՒ ԽԱՅԹԵՐԻ

Նախ ես չը պատասխանեցի և ամօթը այտերուս էր ու սրտիս բարախուսները ստինքներս կը ցաւեցնէին:

Ետքը ես շիմազեցի, ես ըսի՝ «Ո՛չ, ո՛չ»: Ես գլուխս ետ դարձուցի և համբոյրը չը հասաւ շրթերուս, ոչ ալ սերը անցաւ սեղմած ծունկերէս ներս:

Եւ ան ներում խնդրեց ինձմէ, համբուրեց մագերս, ես զգացի անոր կիզող շունչը, և ան գնաց... Այժմ ես մենակ եմ:


Կը նայեմ դատարի հրապարակը, ամայի անտառը, կոխկըտուած զեախնը: Եւ կը խաճնեմ բուռնքներս մինչև արիւնիւր, և կը խեղդեմ ճիշերս խոտին մէջ:

18. ԲՆԴՈՒ ԳԻՇԵՐՎՆ

Մէն մենակ քնած էի, ինչպէս կաքաւ մը ցախերուն մէջ... Թէթե քամին, ջուրերուն ազմուկը, գիշերուան քաղցրութիւնը ինձի պահեր էին այնտեղ:

Անխոհեմ, քնացայ այնտեղ, ու ես զարթնեցայ ազադակելով, ու ես պայքարեցայ ու ես արտասուեցայ, բայց արգէն շատ ուշ էր: Եւ ինչ կ'ընան ընել երկխայի մը ձեռքերը:

Ան չը բաժնեցաւ ինձմէ: Ընդհակառակը թեւերուն մէջ աւելի գործովային սեղմեց ինձի իր կըծքին և ես այլևս աշխարհի վրայ չը տեսայ ոչ երկիրը ոչ ծառերը, բայց միայն անոր աչքերուն փայլը...



նապեւ, բայց ես քիչ մը կը գողտամ: Ինքը կնձմէ ետքը կը նւագէ: Այնչափ մեղմօրէն որ ես հազիւ կը լսեմ:

Ոչինչ չ'ունինք իրարու ըսելու, այնչափ որ իրարու մօտիկ ենք, բայց մեր երգերը կ'ուզեն միմիանց պատասխանել, և հերթով մեր բերանները կը միանան սրինդին վրայ:

Ուշ է, անա կանանչ գորտերու երգը, որոնք կ'սկսեն գիշերւան հետ: Մայրիկս երբէք չըզլիտի հաւատայ, որ ես այս չափ երկար ուշացեր եմ կորսնցուցած գօտիս վնասելու համար:

14. ՎԱՐՄ ԵՅՐ

Մն ինձի ըսաւ՝ «Այս գիշեր ես երագեր եմ: Քու վարսերդ պարանոցիս շուրջն էր: Քու մագերդ սե վզնոցի մը պէս փաթաթուեր էին ծոճրակիս ու կուրծքիս շուրջը:

Ես կը փաղաքշէի անոնց, և անոնք իմն էին, և այսպէս մենք ընդմիշտ կապուած էինք իրարու նոյն մագերով, շրթունք շրթունքի, ինչպէս երկու գամիներ, որոնք յաճախ մէկ միակ արմատ ունին:»

«Եւ քիչ առ քիչ ինձի թւեցաւ — այնչափ մեր անգամները խառնուած էին իրարու — որ ես կը գտնայի դու, և դուն կը մտնայիր ինձի մէջ, ինչպէս իմ երազը:»

Երբ ան վերջացաւ, ան մեղմօրէն դրաւ իր ձեռքերը իմ ուսերուս վրայ ու նայեցաւ ինձի, այնչափ անուշ հայացքով մը որ ես սարսուզին խոնարհեցի աչքերս:

15. ԲՈՒԹՎԷՐ

Կիբասը տեսաւ որ ես եկայ հագնուած միայն ծառերու ճիւղերէն հիւսուած կարճ զգեստով մը, որովհետեւ օրերը հեղձուցիչ են: Մն ուզեց կազազարել իմ ստինքը, որ բայց էր մնացեր:

Մն վերցուց նուրբ կուր, խոճորեց սառն ջուրի մէջ: Եւ երբ անով սեղմեց մօրթիս վրայ, ես կարծեցի թէ ուշագնաց կ'ըլլայի, այնչափ այդ հոգը պաղ էր:

Իսկ կազազարուած կուրծքէն, ան կլոր և պորտաւոր բոժակ մը շինեց: Դրեց արեւ, որ չորնայ և ներկեց, ծիրանեզոյն ու գեղին ծաղիկներ սեղմելով չորս դին:

Ետքը մենք գնացինք մինչև աղբիւրը, որը ձօնուած էր յաւերժահարսերուն ու մենք նետեցինք բոժակը ջուրի հոսանքին մէջ, շահալրակի ցողուններով:

16. Վ՛՛ՐՅԵՐԸ Գ՛՛ՆԵՐՎ՛՛Ն ՄԻՋ

Գիշերը իջնալուն պէս աշխարհը մերն է և սասուածներունը: Մենք կ'երթանք դաշտերէն աղբիւր, մութ անտառներէն բացատները, ուր մեզ կը տանին մեր մերկ ոտքերը:

Պզտիկ սասուերը բաւական կը փայլին մեզի պէս պղպտիկ սոււերներու համար: Երբեմն ցած ճիւղերուն տակ մենք կը գտնանք նիրհած եղնիկներ:

Բայց, գիշերւան մէջ, ամենէն զրաւիչը քան որևէ ուրիշ բան մը, մեզի ծանօթ տեղ մըն է, որը մեզ կը զրաւէ անտառին մէջէն, խորհրդաւոր վարդերու մացառ մը:

Որովհետեւ ոչինչ այնքան սասուածային է երկրի վրայ որչափ վարդերուն բուրումը գիշերւան մէջ: Ինչու ախ ստեղծ երբ մենակ էի, այսպէս հարբած չ'էի զգար դիս անոնցմով:

17. ԽՂՈՒԻ ԽԱՅԹԵՐԸ

Նախ ես չը պատասխանեցի և ամօթը այտերուս էր ու սրտիս բարախումները ստինքներս կը ցաւցնէին:

Ետքը ես չ'իմացրեցի, ես ըսի՝ «Ո՛չ, ո՛չ»: Ես զլուխ ես գարձուցի և համբոյրը չը հասաւ շրթերուս, ոչ ալ սէրը անցաւ սեղմած ծունկերէս ներս:

Եւ ան ներում խնդրեց ինձմէ, համբուրեց մագերս, և զգացի անոր կիզող շունչը, և ան գնաց... Այժմ ես մենակ եմ:


Կը նայեմ գատարի հրապարակը, ամայի անտառը, կոխկրուած զետիներ: Եւ կը խաճնեմ բոունցքներս մինչև արիւնիւր, և կը խեղդեմ ճիշերս խոտին մէջ:

18. ԲՆԻՄ՛՛ԶԻԸ Գ՛՛ՆԻՆԸ

Մէն մենակ քնած էի, ինչպէս կաքաւ մը ցախերուն մէջ... Թէթե քամին, շուրերուն ազմուկը, գիշերւան քաղցրութիւնը ինձի պահեր էին այնտեղ:

Անխոհեմ, քնացայ այնտեղ, ու ես զարթնեցայ ազակելով, ու ես պայքարեցայ ու ես արտասուեցայ, բայց արգէն շատ ուշ էր: Եւ ինչ կ'ընան ընել երեխայի մը ձեռքերը:

Մն չը բաժնեցաւ ինձմէ: Ընդհակառակը թներուն մէջ աւելի գորովալին սեղմեց ինձի իր կրծքին և ես այլևս աշխարհի վրայ չը տեսայ ոչ երկիրը ոչ ծառերը, բայց միայն անոր աչքերուն փայլը...



Քեզի յաղթանակողդ Քրիստոս կը նւիրաբերեմ այս ձօ-
ները դեռ ևս խոնաւ ցօղերէն, հեաքերը կոյսի մը ցաւերուն,
վկաները քունիս և զիմադրութեանս:

19. **ՀԻՆՅՆՐԴՐՈՒՆԵՐԻՆ**

Լացարարուծիներ, մի ըսէք որ դուք տեսաք ինձի: Ես
յոյսս ձեր վրայ կը դնեմ. մի կրկնէք: Զգեստիս և կուրծքե-
րուս մէջ թաքցուցած ձեզի բան մը կը բերեմ:

Ես սարսափահար պզտիկ հաւի մը կը նմանիմ... Չեմ
զիտեր թէ արդեօք պիտի համարձակուիմ ձեզի ըսել... Սիրտս
մեռնելու աստիճան կը բարբախէ . . . Քոզ մըն է ձեզի կը բե-
րեմ:

Քոզ մը և սրունքներուս ժողաւէնները: Կը տեսնաք,
արիւն կայ. Ապօղոնով կը երգւիմ որ ահամայնց էր: Ես ինձի
լաւ պաշտպանեցի, բայց սղամարդը որ կը սիրէ, մէզմէ աւելի
ուժեղ է:

Աղէկ լացէք անօնց, մի խնայեցէք ոչ աղը և ոչ կա-
ւիճը: Ես չորս լուծայ կը դնեմ ձեզի համար Աֆրօզիտէյին
սաքերուն տակ և մինչև իսկ արծաթ դահեկան մը:

20. **ԵՐԳ**

Երբ ան վերադարձաւ, ես թաքցուցի զէմքս կրկու
ձեռքերով: Մն ինձի ըսաւ. — Ոչինչէ մի վախնար, ս՛վ տե-
սաւ մեր համբոյրը: Ո՛վ մեզ տեսաւ, զիշերը և լուսինը:

«Եւ ասողերը և առաջին արշալոյսը: Լուսինը նկատեց
լիճին մէջ և ըսաւ շուրին, ուսինների տակ: Կիճին շուրը ը-
սաւ թիակին:»

«Եւ թիակը ըսաւ նաւակին և նաւակը ըսաւ ձկնորսին:
Աւանդ, աւանդ, եթէ այս ամբողջը ըլլար, բայց ձկնորսը ըսաւ
կնոջ մը:»

«Ձկնորսը բոսա կնոջ մը, հայրս, մայրս և քոյրերս և
ամբողջ հեղասը *) կ'իմանայ:

21. **ՊԻՆԻՅԻՍ**

Կին մը կը պարուրւի սպիտակ բուրդի մէջ: Ուրիշ մը
մեատաքս ու սսկի կը հագնի: Ուրիշ մը ծաղիկներով, կանաչ
տերևներով և խաղողներով կը ծածկուի:

Ես միայն մերկ, կրնամ տպել: Սիրեկանս վերցուր
ինձի, ինչպէս որ եմ. առանց շրջագգեստի, առանց գոհարնե-

*) Յունաստանը:

րի և առանց սանդալների, ապա Պիլիգիսը ամբողջովին մե-
նակ:

Իմ մտղերը սև են իրենց սևութեամբ և շուրթերս կար-
միր են իրենց կարմրութեամբ, խոպոպներս կալեկոծին շուր-
ջս փետուրների պէս ազատ ու կլոր:

Վերցուր՝ ինձ ինչպէս որ մայրս է պատրաստէր, սի-
րոյ հեռաւոր զիշերւան մը մէջ, եթէ ես քեզի այսպէս
գուր գամ, մի մոռնար ինձի ըսել այդ:

22. **ՊԶՏԻԿ ՏՈՒՆԸ**

Պզտիկ սոււնը, ուր կը գտնուի անոր անկողինը աշխար-
հի ամենէն սիրունն է: Մն շինուած է ծառերու ճիւղերէ, չորս
չոր հողէ պատերով և ծիղէ վարսերով:

Ես կը սիրեմ այն, որովհետև մենք այնտեղ կը պառ-
կինք զիշերները զովանալէն ի վեր, և որչափ որ զիշերները
աւելի զով են, նոյնքան աւելի երկար են: Լուսածագին ես
ինձի յօգնած կըզգամ:

Ներքնակը գեանի վրայ է: Երկու բրդէ սև ծածկոց-
ներ կը պարուրեն մեր մարմինները, որոնք կը տաքնան:
Անոր կուրծքը կը ճմլէ իմ ստինքները: Իմ սիրտը կը բա-
բախէ:

Մն ինձի այնպէս ուժգին կը սեղմէ, որ զիս կը փշրէ,
եւ որ խեղճ պզտիկ աղջիկ մ'եմ, բայց ան ինձի կը միանայ
թէ չէ, ես այլևս ոչինչ չ'եմ զիտեր աշխարհէն, այն ատեն
կրնան իմ չորս անգամներս կտրել առանց որ յաջողին լսել
ինձմէ իմ բերկրանքս:

23. **ԿՈՐԱԾ ՆԱՄԱԿԸ**

Աւագ վրաս էր. ես կորսնցուցի անոր նամակը: Ես
զրեր էի մորթիս և կրծկակապիս մէջտեղ, ստինքիս տաքու-
թեան տակ: Ես վազեր եմ և ան ընկեր է:

Եկած ճամբաս ես կը դառնամ, եթէ որեւէ մէկը վըտ-
նայ կը տեղեկացնէ մօրս, և ես քոյրերիս ծաղրանքին ենթա-
կայ կը մտրակահարւիմ:

Եթէ տղամարդ մ'է գտնողը, ինձի կը վերադարձնէ, և
կամ, եթէ ցանկանայ գաղտնի խօսիլ հետս, ես զիտեմ մի-
ջոցը անոր ձեռքէն աննելու:

Եթէ կին մըն է գտնողը, ս՛վ պահապան Զէւս, *)
պաշտպանէ, զիս, քանզի նէ կըսէ ամենուն և կամ կը լսէ
սիրականս:

*) Գերագոյն Աստուածը հելէնացոց, որը մարմնացնում էր եր-
կինքը: Հայրը բոլոր աստուածներու և մարդկանց: Ապրում էր Եթերի
մէջ և սարերի գագաթին: Ամենակարող բարերար Աստուածն էր ամբողջ
սիրեղբրի:

24. ԵՐԻՈՒՄ

«Երբ որ գեաին շուրբ բարձրանայ ձիւնապատ սարե-
րուն գազաթները, երբ որ զարին ու ցորենը ցանեն ծովուն
շարժուն ախոսներուն մէջ:

«Երբ որ շոճիները լիճեր ծնին և նունուֆարները՝ ժայ-
տեր, երբ արևը սենայ, երբ լուսինը իյնայ խոտին վրայ:

«Այն ատեն, այս, միայն այն ատեն, ես ուրիշ կին մ'ը
կ'առնեմ, և քեզի կը մտնամ, Պիլիպիս, հողին իմ կեանքի,
սիրաբ իմ սրտի»:

Ան ինձի այսպէս ըսաւ, ան ինձի այսպէս ըսաւ, ինձի
ի՞նչ փոյթ մնացեալ աշխարհը, ուր ես դու, խօյ երջանկու-
թիւն, որ քեզ կը համեմատես իմ երջանկութեան:

25. ԿԻՅԵՐԸ

Ես եմ որ հիմա՛ անոր կը փնտռեմ: Սմեն զիշեր, շատ
կամացուկ, կը թողնեմ տունը, և կ'երթամ երկար ճամբայով
մը մինչև անոր մարգագետինը, անոր քնացած տեսնելու համար:

Երբեմն ես երկար կը մնամ առանց խօսելու, երջանիկ
միայն անոր տեսնելով, և ես կը մօտեցնեմ շուրթերս շուր-
թերուն, համբուրելու համար միայն անոր շունչը:

Յետոյ, յանկարծ կը ապրտուչիմ անոր վրայ: Ան կը
զարթնի իմ թևերուս մէջ, և ան այլևս չի կրնար օտքի ելնել,
որովհետեւ ես կը սոյլարեմ: Ան կամաթող եղած կը խնդայ
ու ինձի կը սեղմէ: Այսպէս մենք կը խաղանք գիշերուան մէջ:

... Արշալոյսին առաջին ցոլքը: Օ՛ շար լոյս, դուն ար-
դէն երեցար: Ո՞ր մշտնջենական խաւար քարանձաւին մէջ,
որ ստորերկրեայ մարգագետնին վրայ պիտի կարենանք
այնչափ երկարօրէն սիրել իրարու, որ քու գոյութիւնդ մտ-
նանք...

26. Մ Ր Օ Ր

Ննջիր, քու խաղալիքներդ Սարգէն ուղեցի, և քու հա-
զուամներդ Բաբելոնէն: Ննջիր, դուն Պիլիպիսին և արևելքի թա-
ղաւորի մը ազնիւն ես:

Անտառները՝ պալատներն են որ կ'առուցեցին քեզ հա-
մար միայն, և ես քեզ աւի: Շոճիներուն բունները՝ սիւներն են,
բարձր ճիւղերը՝ կամարները:

Ննջիր, որպէսզի ան քեզ չը զարթնեցնէ, ես կ'ծախեմ
արեր ծովուն: Ազաւնիի թևերուն հովը պահաս թեթև է քան
քու շունչդ:

Ազնիկդ իմ, մարմինդ իմ մարմնի, դուն երբ բանաս
աչքերդ կըսես, թէ ի՞նչ կ'ուզես, գաշար թէ՛ քաղաքը, սաքը
թէ՛ լուսինը և կամ թէ՛ ճերմակ շքախումբը ստուամներու:

«ԳԱՂԱՓԱՐ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

1. ԲՃ. Ա. ՂԱԶԱՐԵԱՆ, Աղտոտված հողի և հայրազարթուած վարքագիծը . . . 2 դ.
2. » » Մամենար Պահանջում է . . . 1 դ.
3. » » Ս. Վրացեանը և Անցեալի Իրողութիւնները . . . 2 դ.
4. » » Հայ Լեզուի ուղղագր. խնդիրը . . . 2 դ.
5. » » Երկխոյի Խնամքը . . . 3 դ.
6. » » Հ. Յ. Գաշնակցութեան տրդի բաղարականութիւնը . . . 3 դ.
7. Ս. ԲԱՂԳԱՍՏՐԵԱՆ, Խորհրդային Հայաստան . . . 2 դ.
8. ՓԻԼԻ ԼՈՒԻ, Պիլիսի երգերը, Թարգ. Հայկ Գարսագաշի 2 դ.
9. «ՆՈՐ ԳՐԱՓԱՐ» Ժողովածու . . . 25 դ.

Գինն է 2 ՂՈՒՆ

«Ազգային գրադարան»



NL0310578

